



Армянский Колледж

Армянский виртуальный колледж начинает третий учебный год. За это время нашими студентами стали более чем 150 человек. 2014-2015 учебный год начали 35 студентов. И ты можешь стать одним из них. Учись говорить на армянском языке!

Օրերի հետ

Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնքի վերածնման 26-ամյակին



Դոնի հայկական համայնքն այսօր Ռուսաստանի ամենամեծ գաղթօջախներից է և անգլահատելի դեր ունի դոնահայերի ինքնատիպ էթնոմշակույթի պահպանման գործում: Նա մեծ դեր է խաղում նաև Հայաստանի և Դոնի բազմազգ շրջանի փոխհարաբերությունների ամրապնդման մեջ:

Դոնի հայկական համայնքն այսօր Ռուսաստանի Դաշնության ամենամեծ գաղթօջախներից է և անգլահատելի դեր ունի դոնահայերի ինքնատիպ էթնոմշակույթի պահպանման գործում: Նա մեծ դեր է խաղում նաև Հայաստանի և Դոնի բազմազգ շրջանի փոխհարաբերությունների ամրապնդման մեջ:

Նախիջևանյան հայերի անբաժան մասն են կազմում Անիի Բագրատունյաց հայկական թագավորության, միջնադարյան Դրիմի, Ռուսաստանի և Դոնի պատմությունները:

Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրովարտակով 1779 թվականի նոյեմբերի 14-ին հիմնադրվեցին Նոր Նախիջևան քաղաքը և հինգ հայկական գյուղերը, որոնք գործում են մինչև օրս:

Նախիջևանի հայերն արդեն ինը հարյուրամյակ ապրում են հայրենիքից դուրս: Նրանք կարողացել են պահպանել իրենց մշակույթը, լեզուն, հավատը, ավանդույթներն ու սովորույթները: Արդեն 235 տարի հայերն ապրում են Դոնի հողում: Նրանք այստեղ մեծ ավանդ ունեն կյանքի բոլոր բնագավառներում, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, առևտուր, մշակույթ, Նպաստում են երկրամասի տնտեսական աճին:

Նոր Նախիջևան քաղաքում գործել են 7 հայկական եկեղեցի, ավելի քան 13 հայկական դպրոց, հոգևոր ճեմարան, հայկական մանկավարժական տեխնիկում, Ռուսաստանի հարավում առաջին տպարանը, ամառադրոշիկ, թերթեր հայերեն լեզվով, Նախիջևանի հայկական թատրոնը, հասարակական և բարեգործական կազմակերպություններ, նաև հայկական քաղաքական կուսակցություններ: Դոնի հողում են ծնվել Ռ. Պատկանյանը, Մ. Մալբանդյանը,

Մ. Սարյանը, Ա. Գաբրիելյանը և էլի շատ ու շատ գիտնականներ, նկարիչներ և երաժիշտներ, բժիշկներ և իրավաբաններ, ճարտարապետներ և հոգևորականներ:

1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլոր այս ազգային, հոգևոր, պատմական, մշակութային արժեքներին փոխարինում է կոմունիստական գաղափարախոսությունը: Դադարում են գործել հայկական թերթերն ու ամսագրերը, փակվում են դպրոցները, բարբարոսաբար քանդվում են հայկական եկեղեցիները: Նախիջևանը վերանվանում են Պրոլետարսկի շրջան, 1941-ին վերջնականապես դադարում են գործել բոլոր հասարակական ազգային կառույցները:

1988-ի նոյեմբերին, շնորհիվ ժողովրդական կարգերի հաստատման Նախանջանների, Գրիգոր Խուրդոյանի և ուսումնական կառույցների մի խումբ ներկայացուցիչների (Ա. Ազաֆուլով, Կ. Աբաշևիկով, Վ. Չուբ) Համառուսաստանյան մշակութային ֆոնդի Ռոստովի բաժանմունքում ստեղծվում է վերածնվում և «Նոր Նախիջևան» ռուս-հայկական բարեկամության մշակութային կազմակերպության ղեկավարությունը:

Ընկերակցության առաջին նախագահ ընտրվում է Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ, Ռոստովի Ռայմանիևի մանկան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գրիգոր Խուրդոյանը: Հետագայում մի քանի անգամ փոխվում է ղեկավարակցության անվանումը:

1997-ին Նոր Նախագահ է ընտրվում Էդուարդ Վարդանյանը, իսկ 2005-ից մինչև օրս Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնքը ղեկավարում է Հարություն Աուրմայանը:

Այսօր Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնքը Ռոստովի մարզի օրենսդիր մարմնի պատգամավոր Հարություն Աուրմայանի ղեկավարությամբ, հաստատուն քայլերով ընթանում է առաջ: Համայնքի առօրյան լեզուն է գործում են հայոց լեզվի խմբակները, Հայկական վիրտուալ քոլեջը, «Հայագ» ինտերնետ-հանրագիտարանը, երկլեզու ազգային «Դոնի Նախիջևան» թերթը: Համայնքն ունի երիտասարդական միություն:

Հայոց մեծ ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ համայնքը մշակում և պատրաստվում է այդ տխուր տարելիցը հավուր պատշաճի հիշատակելուն: Ինչպես նշեց համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը, 2014 թվականի հոկտեմբերից մինչև 2015 թվականի վերջը կկազմակերպվեն տարատեսակ միջոցառումներ, մրցույթներ, կիրառարական գրքեր, թատերական բեմադրություններ, կցուցադրվեն գիտահետազոտական, փաստագրական ֆիլմեր՝ նվիրված Հայոց մեծ եղեռնին: 2015 թվականի ապրիլի 24-ին Ռոստովի երաժշտական թատրոնում համայնքը կկազմակերպի երաժշտական հուշ – երեկո՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Երկար կարելի է պատմել Դոնի հայկական համայնքի գործունեության մասին, այն ազգանվեր հայրերի և մայրերի մասին, որոնք այսօր ոչ միայն անտարբեր չեն պանդուխտ հայի ճակատագրին, այլ ստեղծում են այն մթնոլորտն ու միջավայրը, որի մասին ժամանակին գրել է մեծն քանադուստր Մ. Սալբանդյանը՝ «Հայ ժողովուրդն այսօր ապրում է իր մեծ մայր Ռուսաստանի հողում այնպես, ինչպես իր սեփական տանը...»:

Արմինե Հովսեփյան

Մոնթե Մելքոնյան – 57

«... Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը»



Մոնթեն ծնվել է 1957 թ. նոյեմբերի 25-ին, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքից ոչ հեռու՝ Վալսեյի ավանում: Արտասովոր ընդունակությունների տեր Մոնթեն 12 տարեկանում է իմացել իր հայ լինելու մասին: 15-ամյա տղան ճանապարհորդություն է կատարել Եվրոպայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի 41 քաղաքներում: Եղել է Արևմտյան Հայաստանում, իր պապերի տանը...

Ուսումնասիրել է 1915 թվականի եղեռնի պատմությունը: 1973 թ. նրան ուղարկել են Ճապոնիա սովորելու: Մեկ ու կես տարում Օսակա քաղաքի վարժարանն ավարտելուց հետո անցնում է Հարավային Կորեա, աշակերտում բուդդայական վանականի: Ապա անցնում է Վիետնամ, նրա լուսանկարչական, ապարատը երևանում է այնտեղ մոլեզու պատերազմը: Վերադառնում է Ամերիկա լիովին տիրապետած ճապոնեռենին ու կարգադրող մարտավարության:

1975 թվին գերագույն ավարտել է Մաունթ Ուիթնիի միջնակարգ դպրոցը: 20 տարեկանում ընդունվում է Կալիֆոռնիայի Բըրբլիի համալսարանը: Բացարձակ ընդունակությունների տեր նա չորս տարվա դասընթացն ավարտում է կրկնակի տիրուցում ստանալով հնագիտության և ասիական պատմության մասնագետի վկայականներ: Համալսարանում ուսանելու տարիներին հիմնում է «Հայ ուսանողական միություն» և կազմակերպում ցուցահանդես՝ նվիրված Մեծ եղեռնի...

Մոնթեի ավարտական թեզը նվիրված էր Վանի թագավորության ժայռափոր դամբարանների ուսումնասիրությանը՝ թեզը պաշտպանում է 1978 թվին: Արժանանում է կրթաթոշակի Օքսֆորդի համալսարանում դոկտորական պաշտպանելու համար: Սակայն Մոնթեն Անգլիա չի մեկնում, նա գնում է Արևմտյան Հայաստան՝

Վասպուրականի ժայռափոր դամբարանները և կացարանները չափազանցում և ուսումնասիրելու համար:

1978 թվականի աշնանը մեկնում է Իրան, ապա Լիբանան՝ մասնակցելու Բեյրութի հայ համայնքի ինքնապաշտպանական մարտերին: 27 տարեկանում տիրապետում է անգլերենին, ֆրանսերենին, իսպաներենին, իտալերենին, թուրքերենին, պարսկերենին, քրդերենին:

1980 թվականին միանում է «Հայաստանի ազգագրական հայ գաղտնի բանակին» (ԱՍԱԼ): 1981 թվին նոյեմբերին Փարիզում ձերբակալվում է՝ Հռոմում թուրք դիվանագետի սպանությունը նախապատրաստելու ամբաստանությամբ, որի հերքումից հետո, այնուամենայնիվ, բանտարկվում է կեղծ անձնագիր կրելու համար: Մի քանի շաբաթից ազատ է արձակվում: Երկու տարվա ընթացքում գտնում է ԱՍԱԼ-ի կարևոր դեմքը: Հոդվածներով հանդես է եկել Փարիզի «Հայ պայքար» և Լոնդոնի «Կայծեր» թերթերում, Սան Ֆրանցիսկոյի «Սարդարապատ» ամսագրում, նաև անգլերեն մի շարք գրքերում՝ հայոց ազգային հարցի արդարացի պահանջի և իրավունքի մասին, որոնք լույս են տեսել Լոնդոնում:

1991 թվին, բանտից ազատվելուց հետո, Մոնթեն եկավ Երևան, յոթ ամիս աշխատեց Գիտությունների ակադեմիայում «Հայաստանը և հարևանները» գիրքը գրելու և հրատարակելու նպատակով:

Օգոստոսին ամուսնանում է լիբանանահայ ուսանողուհու՝ Սեդայի հետ, որի հետ ծանոթացել էր դեռևս Լիբանանում եղած ժամանակ: Արցախի ազատագրման պատերազմը սկսելուց հետո, թողնելով գիտական գործունեությունը, մեկնում է Ղարաբաղ մարտական գործողություններին մասնակցելու համար:

Ալզեռնական շրջանում նրա գալն այնքան էլ չեմ չընդունվեց: Ամերիկահայ Մոնթեի նկատմամբ հավատ ու հույս չկար, որոշ գծեր անսովոր էին թե՛ հրամանատարների, թե՛ ազատամարտիկ տղաների համար, սակայն մի քանի ծանր ու դժվարին մարտերից հետո նա այնպիսի խիզախություններ ցուցաբերեց, որ րոհանախակալանքը հնարավոր դարձնելու համարձակությամբ ապշեցրեց անգամ խորհրդային բանակի երկարամյա փորձ ունեցող պրոֆեսիոնալ զինվորականներին: Ծիշտ է, ծնունդով ամերիկացի էր, սակայն արյունով հայ էր ու իր ազգի հավատարիմ զինվորը:

Արցախի պաշտպանության ղեկավարությունը տեսնելով նրա խիզախությունները՝ 1992 թվին հունվարին Մոնթեին հանձնարարում է Մարտունու շրջանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի պարտականությունները: Նրա ղեկավարած ամենապատասխանատու և փայլուն գործողություններից մեկն Օմարի լեռնանցքի նվաճումն էր, ուր մեկ անգամ ևս փայլեց Մոնթեի հրամանատարի, զորավարի տաղանդը: Ունենալով ընկալելու մեծ շնորհը ու հնարավորություն՝ նա ուզեց մի դաշտում աճում էր օրեցօր, թե՛ պետք էր, ուրեմն պետք էր գնալ այդ խելահեղ քայլին, այն բանը, որը խելամուտ մարդը չպետք է անի, նա անում էր, որովհետև, եթե չաներ, չէր կարող:

Մոնթեն որպես զորավար, սպա և հրամանատար կայացավ դժվարին մարտերում, նա և՛ զինվոր էր, և՛ հրամանատար, ու եթե մի բան էր նախապատրաստում, տղաների հետ շարքում զինվոր էր ու առաջամարտիկ, ինչպես պատմում են նրա մարտական ընկերները, նա խստապահանջ էր, անզիջում կարգազանցների, վախկոտների և բոլոր այն մարդկանց հանդեպ, ովքեր խոչընդոտում էին իր ծրագրերը:

Մարտունեցիները պատմում են, թե Մոնթեն որքան հոգատար էր զինվորների նկատմամբ: Ընկերները, հարազատները հազուստ, անհրաժեշտ բաներ էին ուղարկում՝ ինքը չէր վերցնում ոչինչ: Հաճախ վանալ էր տալիս ու ապա կարկատել իր հնամաշ հագուստները՝ նորից հագնելու համար: Ու երբ մի անգամ կշտամբում էին, թե գոնե քրոջը ուղարկած հագուստներից մեկը հագիր, հերիք է կարկատածները հագնեց: «Այս անգամ էլ հագնեմ, հետո կփոխեմ»:

Իր մարտական ընկեր Սլավիկ Հայրապետյանը պատմում է. «Արտասահմանյան զինվորական տաք բաձկոն էի ձեռք բերել, ուրախացած տարա, որ նա հագնեց, որովհետև հագինը մաշված էր»: Մոնթեն կտրուկ մերժել է. «Չես ամչնար, Սլավիկ, տար դիրքերը տղաներին»:

Դեռ կենդանության օրոք նա լեզուգիր հերոս էր, ողջ հայության անվերապահ սիրո և պատկառանքի խորհրդանիշ:

«... Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը», – Մոնթեի այս խոսքը որպես զգաստացման կոչ էր հնչում ճակատային մարտիկների, ամբողջ հայ ժողովրդի համար: Նա անփոխարինելի դեր կատարեց հայկական առաջին ինքնապաշտպանական ուժերը կազմակերպելու և ապա նաև կանոնավոր բանակ ստեղծելու մտահղացումները: Մոնթեն հավատում էր իր զինվորներին, մեր ժողովրդին, համոզում, որ պետք է կռվել, որպեսզի հաղթենք, ա-

ռանց կռվի ոչինչ չի ստացվում թե՛ մարտի դաշտում, թե՛ թիկունքում: 1993 թվականի հունիսի 12-ին Արցախի կրակակետերի ոչնչացման լայնածավալ գործողություններից հետո Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանը զինակիցների հետ իջնում է հրամանատարական բարձունքից՝ անձամբ ստուգելու իրավիճակը և դիրքավորելու իր մարտիկներին: Աղ-գամի մերձակա Մարգիլի գյուղի ծայրին անսպասելի հանդիպում է հակառակորդի ԲՄԳ-1 գրահամեքենային՝ Ներսիս և շուրջը զինվորներ: Մեքենայից իջնելով՝ Մոնթեն դիրքավորվելով՝ կրակահերթ բացեցին, առձակատ անհավասար մարտում գրահամեքենայից արձակած հրթիռի բեկորից զոհվում է Մոնթեն:

Հետմահու արժանացել է Հայաստանի և Արցախի Հանրապետությունների Ազգային հերոսի կոչման: Նրա անունով է կոչվում ՀՀ ռազմական քոլեջը, Երևանում և Ղարաբաղում նրա անվամբ կան դպրոցներ:

Երախտապարտ արցախցին նրա անունով է կոչել Մարտունու շրջակետները՝ վերանվանելով Մոնթեբերդը, իսկ կենտրոնում կանգնեցված է նրա հուշարձան – կիսանդրին:

... Ամեն երեկո, Դաշտից տուն դարձող Մոնթեբերդին Հանդիք քո բաժին Ծաղիկն է բուրում Ու գրկիդ դնում...